ՄՐՑՈՒՅԹ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ /ծածկագիր 3-1-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հայաստանի հանրապետության Գեղարքունիք մարզի Լիճքի համայնաքապետարանը հայտարարում է մրցույթ՝ աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր 3-1-1) համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատուի(ՏԶՊ) պաշտոն զբաղեցնելու համար:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է ՝
- առնվազն միջնակարգ կրթություն.
- ՀՀ Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Գույքահարկի մասին>>,<<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
- ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
- հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.
- իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
- իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար.
- բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

- բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.
- բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բյուջեի և դրանում առաջարկվող փոփոխությունների, բյուջեի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի ամսական, եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվության նախագծերի կազմման, ինչպես նաև բյուջեի կատարման վերլուծության, ամփոփման և բյուջեի կատարման համար անհրաժեշտ աշխատանքներին և ներկայացնում է համապատասխան առաջարկություններ բաժնի պետին.
- բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջեի միջոցների տնօրինումն ու դրանց նպատակային օգտագործումն ապահովող աշխատանքներին.
- մասնակցում է գույքահարկի, հողի հարկի վճարողների հաշվառման, գույքահարկի, հողի հարկի բազաների վարման աշխատանքներին.
- մասնակցում է գույքահարկ և հողի հարկ վճարողների ծանուցման, նշված հարկատեսակների գանձման աշխատանքներին.
Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2018թ. ապրիլի 16-ին ժամի 14:00-ին՝
Լիճքի համայնքապետարանի շենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Լիճքի համայնքապետարան հեռ. +37493238772 և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցե ՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, հեռ. (0264) 2-23-32
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 02.04.2018թ.: